աթոռ է, երկու կողքերին մի-մի երկար ձող կպցրած տանելու համար:

Ես շատ էլ չօգտուեցի այդ պատգարակից, որի մէջ նստելը ուղղակի մի տանջանք է անսովոր մարդու համար, կարելի է մինչեւ անգամ ծովային հիւանդութիւն ստանալ, այնքան մարդ ճօճւում է աջ ու ձախ, առաջ ու ետ:

Գրեթէ ամբողջ ճանապարհը ես ոտով անցայ եւ բնաւ չը յոգնեցի. այնքան հրապուրիչ էին դէմս բացւող ու անդադար փոփոխւող լեռնային տեսարանները:

Արեւն արդէն մայր էր մտել, երբ հասանք Կօջիգոկու եւ իջանք մի զուտ ճապոնական հիւրանոց: Աւանում կային նոյնպէս ուրիշ հիւրանոցներ, արդէն յարմարեցրած եւրոպացու ճաշակին, բայց մենք այս անգամ ուզեցինք ճապոնականի համն առնել:

Մեզանից ամեն մէկին յատկացրին մի փոքրիկ գողտրիկ սենեակ, որի գլխաւոր տարօրինակութիւնն ու հրապոյրն է՝ պատուհան չունենալը:

Ամբողջ պատը ներկայացնում է մի շարք շարժական դռներ ճապոնական թղթով կպցրած: Այդ շարժուն դռները կարելի է քաշել աջ կամ ձախ, միացնել ու բաժանել, տալով սենեակին քո ուզած մեծութիւնն ու ձեւը:

Կարելի է բոլորովին հեռացնել պատերը, եւ այն ժամանակ սենեակը դառնում է մի պատշգամբ, որից կարող ես վայելել բնութեան գեղեցկութիւնը առանց աշխատանքիդ սեղանից հեռանալու: Բայց կա արդէն մի նեղ ու իսկական պատշգամբ էլ, որ գօտիի պէս գրկում է ամբողջ տնակը: Գիշերը այդ